

## Շորենա Խուխուա

Ծրագիր՝ «Ուսուցանիք վրացերենը, որպես երկրորդ լեզու», ուսուցիչ

# ԹԱՏԵՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ-ԴԱՍ ՎՐԱՑԵՐԵՆԻ, ՈՐՊԵՍ ԵՐԿՐՈՐԴ ԼԵԶՎԻ, ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴ

## ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Ոչ վրացալեզու դպրոցներում թատերականացումը կարող է քննարկվել որպես դպրոցական կրթական գործընթացի ակտիվացման գործնական միջոց այն դեպքում, եթե տեղի ունենա թատերականացման այնպիսի մեթոդների մշակում, որոնք կապահովեն. ա) դաստիարակության, ուսուցման և անհատական զարգացման միասնականություն, բ) իրար ընդունելու, ռեֆլեքսիայի և տեսանելիացման հնարավորություն, այս դեպքում թատերականացումը կվերածվի այն գործնական ուսուցողական միջոցի, որ իրական դրամատիկական սցենարի իրականացման համար կիրառում է արվեստին բնորոշ բոլոր պատկերավորման եղանակները և ապահովում է. ա ) առարկաների միջև ինտեգրում, բ) պաշտոնական, առարկային կողմնորոշված ուսուցման փոխակերպում ոչ պաշտոնական գործնական-գործընթացային ձևի, գ) համախոհների խմբի ձևավորում և անհատական ճանաչման խթանում:

Ոչ վրացալեզու դպրոցներում պետական լեզվի (վրացերենի), որպես երկրորդ լեզվի, ուսուցումը կապված է մի շարք բարդությունների հետ: Նոր ներմուծված բազմամակարդակ դասագրքերը, ճիշտ է, նպաստում են լեզվի յուրացմանը, նախատեսում են ունեցած գիտելիքը և դեռահասների հնարավորությունները, սակայն ընդգրկում են պարտադրման տարր և

չգիտակցված, պասսիվ դիմադրություն են առաջացնում սովորողների մեջ, համապատասխանաբար, մեծ նշանակություն ունի այն օժանդակ գրականության և մի շարք ինչպես դասարանական, այնպես էլ արտադասարանական ակտիվությունների կիրառումը, որոնք կնպաստեն լեզվի յուրացմանը:

Վրացերենի, որպես երկրորդ լեզվի, ուսուցման ժամանակ արդյունավետ մեթոդներից մեկը ստեղծագործական տարրի ներմուծումն է դասի մեջ: Այս տեսակետից հետաքրքիր մանկավարժական մոդելավորման ձև է **թատերականացումը**: Այն կառուցվածքային տեսակետից միավորում է դասարանական և արտադասարանական ակտիվությունները, առարկաների միջև ինտեգրման լավ միջոց է: Մինևույն ժամանակ, շոշափելի արդյունքի հասնելու համար անպայման նախատեսում ենք այս ակտիվության երկու ուղղությունները՝ ա) թատերականացման տարրի ներմուծում ուսումնական գործընթացի մեջ և բ) թատերականացման տարրի կիրառում արտադասարանական ակտիվությունների մեջ՝ համաժամանակացում:

Ոչ վրացալեզու դպրոցներում, ըստ մեզ, շոշափելի արդյունք է տալիս հերոսականության պայթուտվ լի պատմական գրականության հարմարեցումը, որը դեռահասների մեջ, բացի հաղորդակցական կարողությունների և հմտությունների կատարելագործումից, դոմինանտ էթնոսի

մշակույթի և պատմության նկատմամբ հետաքրքրության խթանման միջոց կարող ենք համարել:

Վրաստանի պատմությունից թեմատիկայի մոնո-ներկայացման վերածելը և նրա կատարումը դերային խաղերով զվարճալի են դարձնում ուսումնական գործընթացը, աճում է ներգրավվածությունը, երեխան հեշտությամբ մտապահում է այն լեզվական կառույցները, որ բնորոշ է պատմական տեքստին, պատմական փաստերին, որոնց վրա հիմնվում է տեքստը և որպես արդյունք հարստանում է բառապաշարը:

Դարաշրջանի, գործող հերոսների և հաղորդակցական նյութի ընտրությունը պայմանավորում են պայթուտը, հուզական տարածման հնարավորությունը և պարզ, սակայն նոր լեզվական նյութով ծանրաբեռնված կառույցները: Կարևոր է, որ պատմական տեքստի հարմարեցման ժամանակ աշակերտներն իրենք ընտրեն կոնկրետ իրադարձությունը և դեմքին, ինչի համաձայն կազմվում է ներկայացումը, տեքստի վրա համատեղ աշխատանքն օգնում է դեռահասին, նույնականացնել կոնկրետ գործող անձի հետ, խոսեցնել նրան իրեն ծանոթ

բառապաշարով, որը հնարավոր է այն ժամանակաշրջանում հաստատված չէր սակայն ադեկվատ է կոնկրետ հանրության համար, համապատասխանաբար, տեղի է ունենում թափանցում բնավորության մեջ: Աշակերտն այս ժամանակ իրեն համարում է ոչ թե կոնկրետ դպրոցի կամ դասարանի, այլ՝ պատմական դարաշրջանի մաս:

Առանձնապես կարևոր է այս մեթոդի փորձարկումը դեռահասների այն խմբի մոտ, որն ապրում միալեռնիկ տարածքում, նրանց համար մեր երկրի պատմությունը ոչ թե թերթերից մատուցված չոր ժամանակագրություն է, այլ հայրենիքի անցյալի կենդանացված դրվագի է վերածվում, որի մասը և գլխավոր գործող հերոսն ինքն է դառնում .. Իմաստավորում է և զգում բոլոր ցավերը թե հիմնախնդիրները, հաղթանակը և պարտությունը, որը նրա ներկայացված հերոսին տվել է ճակատագիրը ... Վրաց լեզվի ակումբում (փոքր բացատրություն ծանոթության տեսքով՝ ինչ ակումբի մասին է խոսքը) ներկայացված բեմադրությունը՝ «Դավիթ Շինարար», որի սյուժեն կառուցված էր թագավորի դժբախտ սիրո պատմության վրա, երեխաներին խորը վերլուծել է տալիս այն

ժամանակաշրջանը և դժվարությունները, որ որպես ծանր բեռ բաժին էին հասել 16 տարեկան թագավորին: Ամբողջ տեքստին ուղեկցում են „մյջջ ԵՐ ԸՎ ԶՄՐՏՅԵՆ“: „մյջջ ԵՐ ԸՎ ԶԵՄՆ“... արտահայտությունները, բոլոր ճակատամարտերից առաջ խորհրդակցում է Գիորգի Ճղոնդիդելիի հետ և բոլոր ճակատամարտերի արդյունքները քննարկում է նրա հետ ... Այս պահը հեշտացրեց ընկալել ժամանակագրական տեղեկությունը և ստացած գիտելիքին շնորհեց այն կայունությունը և խորությունը, որը սովորաբար բնորոշ չէ դասի գործընթացին: Չոր, պատմական փաստերի հարստացումը մարդկային հույզով՝ սիրով թե աստելությամբ, դեռահասի տարիքի համար ընդունելի է դարձնում իրադարձությունը և հերոսին, նրա մոտ որոշակի տրամադրվածություն է ստեղծում, հետաքրքրություն շարժում պատմության այն ասպեկտի հանդեպ, որը մինչ այդ նրան թվում է մտապահվելիք տեղեկությունների կույտ:

Յուրաքանչյուր պատմական երկ կրում է այն դարաշրջանի շունչը, որին պատկանում է ստեղծագործողը: Այդ պատճառով ինտեգրված թատերականացված նախագիծ-դասի

պլանավորման ժամանակ լավ արդյունք են ունենում պատմական իրադարձությանը և հերոսին հուզականորեն մոտ տեքստ ներմուծելը: Առանձին վերցված Աննա Կալանդաձեի բանաստեղծությունը „ջյեօ ճամճջօօ“ ոչ հասկանալի կթվա ոչ վրացալեզու դպրոցի աշակերտներին, լեզվական տեսակետից ևս բավականին դժվար ընկալելի է դասարանական տարածքում, սակայն դաս-նախագիծ «Դավիթ Շինարարում», որտեղ թագավորը բազմիցս հիշատակում է մարդկային մեղքերը, նրա ողջ կյանքը ներկայացված է բեմի վրա և ներկայացումն ավարտվում է կտակով, իսկ հերոսներից մեկն արտասանում է այս բանաստեղծությունը, բանաստեղծական երկը համարժեքորեն է ընկալվում, իսկ տեքստը բոլոր մասնակիցների համար ծանոթ և հուզականորեն ընդունելի է դառնում:

Հույզը պայմանավորում է տրամադրվածություն և կատարում բոլոր այն բարդությունների հարթեցում, որ նոր լեզվական կառույցներով ծանրաբեռնված տեքստի ուսանմանն է ուղեկցում: Դաս-նախագիծ «Գեորգիևյան տրակտատն» ընդգրկում էր Վրաստանի համար անչափ կարևոր ժամանակաշրջանի

նկարագրում. ներկայացման ընթացքում բանբերները տեղեկացնում են Հերակլ թագավորին քաղաքական իրավիճակը, Հերակլը Մուրմոն խորհրդատուի հետ խորհրդակցում է և ենթադրյալ պատասխան է ասում, որ կարող է Գեորգիևյան տրակտակը չկատարվի, բազմիցս ընդգծված է 1783 թվականը, որպես պայմանագրի ձևակերպման տարի, զորահրամանատարներից մեկը լուր է բերում, որ Ռուսաստանը չի կատարում խոստումը, և Տոտլեբենը ճակատամարտից առաջ նահանջում է, ստեղծված իրավիճակի բարդությունը մասնակիցներն այսպիսի պարզ արտահայտություններով են արտահայտում. «Ժամանակն է, Ռուսաստանը կատարի պարտավորությունները», «Եկել է ժամանակը, Ռուսաստանը կանգնի մեր կողմում», «Որտե՞ղ է գեներալ Տոտլեբենի բանակը», «Ռուսաստանը մտադիր չէ մեզ օգնել», «Տոտլեբենը վերադարձավ», «Տոտլեբենից պատասխան չկա» ... Թագավորն ընդգծում է, որ Վրաստանը մենակ է մնացել թշնամու դեմ. «Վաղը Վրաստանը մենակ կպայքարի Ադա Մահմադ Խանի բազմահազարանոց զորքի

դեմ», մի քանի բառով դիմում է գորքին.  
«Աստված Ձեզ պահապան»:

Առաջին հայացքից, տեքստն այնքան էլ բարդ չէ, ոչ էլ պատմությունն է երկար, սակայն մեծ է հուզական լիցքը՝ ճակատամարտերի, պատերազմի վերջում թագավորը ցավով ասում է. «Շատ վրացիներ գոհ գնացին հայրենիքի պաշտպանությանը», երկխոսության մեջ դա է հիշում Սոլոմոնը և թագավորին հիշեցնում վտանգի մասին. «Ադա Մահմադ Խանը դաժան ու անխնա է, եթե Ռուսաստանը մեզ չօգնի, Վրաստանը չի կարող հաղթել»: Տեքստը կատարում է հաղորդավարը, որը մեկ նախադասության մեջ է միավորում ողջ նախադասության պաթոսը՝ «Թուլացած երկիրը զավթեց Ռուսաստանը ... »: Ներկայացումն ավարտում է կենդանացած նկարը, 2 աշակերտ ներս են բերում թուր, 3 դեռահասներ անում են «Ալգեթիի շան լակոտների» արձանի նմանակում, և բոլորը միասին կարդում են բանաստեղծությունը. «Կրկին կմեծանան», ինչը լավատեսական-հայրենասիրական նոտայով է ավարտում ներկայացումը:

Ըստ մեզ, այսպիսի տեսքով ներմուծված պատմական թեման տպավորիչ է, ստացած տեղեկությունը

կայուն կենսական փորձ է դառնում, և որ ամենակարևորն է, ստեղծագործական ակտիվության ժամանակ բարձր է աշակերտների ներգրավվածության ցուցանիշը: Ներկայացմանը մասնակցում են բոլոր աշակերտները՝ անկախ ակադեմիական առաջադիմությունից: Եթե ուսումնական գործընթացում դասը պատմում են միայն որոշ աշակերտներ, որոնք միշտ լավ են սովորում, այս տեսարանների մեջ ներգրավված են բոլորը՝ ոմանք մեկ նախադասություն ունեն ասելու, թեկուզ «Այո՛, թագավոր», շատերը բազմամարդ տեսարանների են մասնակցում և միաձայն բացականչում են «Մենք կհաղթենք», բայց բոլորը մասնակցում են և ըստ իրենց հնարավորությունների են բաժանվում դերերը:

Իհարկե, նախագծի մասնակիցը նախ՝ սեփական դերն է սովորում: Սակայն, միևնույն ժամանակ, մտապահում է ով ումից հետո պետք է ելույթ ունենա: Այստեղից ելնելով՝ նա ուշադիր լսում է ողջ ներկայացումը որոշակի տեղեկություններ ստանում, միանում հուզական տեսարանների, ողջ ուշադրությամբ կենտրոնացված է գործողության վրա:

Իմ գործնական փորձից ելնելով՝ կարող եմ համոզմունքով խոստովանել, որ դեռահասները ինքնադրսևորվում են հենց այսպիսի ակտիվությունների ժամանակ, այնուհետև նախագիծ-դասի ժամանակ նրանք ինձանից խնդրում են ավելի շատ բառեր պարունակող հատվածներ, նրանց մոտ ցանկություն է առաջանում կատարել հեղինակավոր թագավորների դեր: Այսպիսի ժամանակ հետաքրքրության լրիվ կենտրոնացման համար մրցույթ ենք անցկացնում և ամենից լավ խաղացողին ժյուրին ըստ միավորների այս կամ այն դերն է տալիս: Ի զարմանս մեզ, հաճախ հաղթում են այն դեռահասները, որոնք աչքի չեն ընկնում բարձր ակադեմիական առաջադիմությամբ, սակայն մեծ պատասխանատվությամբ են մոտենում դերին և, հաղթանակի ցանկությամբ վառված, ավելին են հասնում: Այստեղից ելնելով՝ կարող ենք ամբողջ պատասխանատվությամբ եզրակացնել, որ ներքին թե արտաքին մոտիվացիայի բարձրացմանը շատ է նպաստում թատերականացված դաս-նախագիծը:

Բոլոր աշակերտները հավասար վիճակում են, քանի որ չունի նշանակություն, թե ով որքան տեքստ ունի ասելու, գլխավորն է, թե ով ինչպես

կխաղա իր դերը, ինչն անչափ կարևոր է այս մեթոդի կիրառության ժամանակ: Քանի որ ոչ վրացալեզու դպրոցում վրացերեն վատ սովորելը հաղորդակցություն չունենալ է նշանակում, երեխան, որը չի սովորում, մեխանիկորեն մեկուսացվում է նրանց կողմից, ով սովորում է և չի հասկանում ուսուցչին, սկսվում է օտարացման գործընթացը դասարանի և անհատի, ուսուցչի և աշակերտի միջև: Իսկ նախագիծ-դասի ժամանակ բոլորն օգնում են միմյանց, իրենց՝ երեխաների կողմից թարգմանվում են անհասկանալի բառերը, բազմիցս արված թարգմանությունը բոլորը մտապահում են, առավել ևս, այն ժամանակ, երբ այն բառը բազմիցս կրկնվում է նախապատրաստման շրջանում:

\* \* \*

Թատերականացված դաս-նախագծի տեսակներից մեկն է գեղարվեստական տեքստի դերային խաղով կատարումը: Աշակերտները սովորում են ստեղծագործությունը և բովանդակության յուրացումից հետո տեղի է ունենում տեքստի հարմարեցում ներկայացմանը: Կարևոր է, որ սցենարն ուսուցիչը ստեղծի ամբողջ դասարանի

հետ, դեռահասները հենց իրենք կընտրեն խաղալու համար դերեր, տեքստին կհամապատասխանեցնեն ժեստեր, դիմախաղ, հագուստ և հույզեր: Բարձրակադեմիական առաջադիմությամբ դեռահասներն ընտրում են բազմաբառ գործող հերոսի, իսկ համեմատաբար պասսիվ աշակերտները՝ իրենց համար հեշտ խաղալու, փոքր տեքստով հերոսի, սակայն գեղարվեստական տեքստի դերերով ներկայացման ժամանակ թեկուզ անբառ դեր ունեցող աշակերտը ուշադիր լսում է ներկայացումը, մտապահում պլոժեն, տեքստը, որ անհրաժեշտ ժամանակ ընդգրկվի տեսարանների մեջ, երեխաները պատասխանատվությամբ են մոտենում իրենց իսկ ընտրած սցենարին և ներգրավվածության աստիճանը բարձր է: Մի քանի փորձից հետո մինչև այժմ որպես բովանդակություն սովորած-գիտակցված ստեղծագործությունը, վիզուալ ներկայացնելուց հետո, ավելի կենդանի և ընկալելի է դառնում, գլխավոր և

երկրորդական հերոսների հույզերը, ապրումները, զգացմունքները՝ մոտ, նրանց իսկ կենդանացված հերոսները գրքից դուրս են գալիս իրական աշխարհ և նրանց իսկ բառերով խոսում:

Նպատակի միասնականությունից ելնելով՝ թատերականացված, ինտեգրված դաս-նախագծի վրա աշխատելու ժամանակ աշակերտների մոտ զարգանում է թիմայնության զգացումը, նրանք ավելի բաց են դառնում նորության հանդեպ, ինչը նպաստում է առողջ և զվարճալի ուսումնական միջավայրի ստեղծմանը:

**Shorena Khukhua**

*Program “Teach Georgian as a second Language”*

*Teacher-consultant*

## **Role-Playing - Effective Method to Teach Georgian as a Second Language**

### **ABSTRACT**

Role-playing for state language teaching in non- Georgian schools can be considered as an opportunity of activation in educational process, that should be ensured: a) Combination of educational training and personal development b) Relationship of reflection and verbalization, that makes role-playing to didactical tool, which is the opportunity to present authentic dramatical sciences with using of various artistic tools. Meanwhile role-playing promotes: a) the integration between subjects, b) transformation a formal teaching to a non-formal. c) formation of persons with identity ideas, and stimulating personal identity.